

ԱՐԱՄ

ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՍՕՔՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՇՆՈՐՀՔ, ՄԵՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԷ ԵՒ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԷՆՋ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒԱԻՈՐՉԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԱՌ

ՍԻՐԵՅՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՐԱԶԱՏԻՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՕՇԱԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՕԼՈՅԵԱՆ
ՈՐ Ի ՆԻԻ ԵՈՐՔ, Ի ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Հիսսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Անուշաւան Եպս. Դանիէլեանի Մեզի յղած նամակէն ուրախութեամբ իմացանք, որ յառաջիկայ Հոկտեմբերի 29-ին, 2017, պիտի նշուի Ձեր քահանայական ձեռնադրութեան յիսնամեակը:

Քրիստոնէական ջերմ սիրով, Հայրապետական օրհնութեամբ ու հոգեկան ցնծութեամբ կողջունենք այս կարեւոր հանգրուանը Ձեր հոգեւոր կեանքի ու ծառայութեան: Արդարեւ, անցնող յիսուն տարիներուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ճամբով Ձեր կեանքի սրբազան կոչումը ընտրեցիք ծառայել Աստուծոյ, մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին: Ծառայական դժուար ճամբէն քալեցիք խոր հաւատքով ու օրինակելի նուիրումով, եւ ծառայական Ձեր կոչումը իրագործեցիք անշեղ հաւատարմութեամբ ու ամբողջական սիրով:

Ձեզ մօտէն ճանչցած ենք Դայրեւանքի ուսանողութեան օրերէն սկսեալ, մինչեւ արեղայութիւն, ապա՝ Միացեալ Նահանգներու մէջ բարձրագոյն ուսման տարիներէն սկսեալ, մինչեւ վանական ծառայութիւն եւ Առաջնորդական պատասխանատուութիւն՝ Քուէյթի, Արաբական Միացեալ Էմիրութեանց եւ Միացեալ Նահանգներու մէջ: Մենք ծանօթ ենք Ձեր առաքելութեան նկատմամբ Ձեր ցուցաբերած բժախնդրութեան ու նախանձախնդրութեան թէ՛ միջ-եկեղեցական, թէ՛ հայ եկեղեցւոյ Հայրապետական երկու Աթոռներու միջեւ գործակցութիւնը աւելի ծաւալելու ձգտող աշխատանքներուն եւ թէ ընդհանրապէս մեր Սուրբ Աթոռի կեանքին ու վկայութեան շրջագծէն ներս: Մենք նաեւ քաջատեղեակ ենք Աստուածաշունչի արդի Արեւմտահայերէնի թարգմանութեան աշխատանքներուն Ձեր բերած կարեւոր նպաստին:

Արդարեւ, Ձեր ստանձնած բոլոր պատասխանատուութիւնները կատարեցիք բարձրագոյն աստիճանի աշխատանքներով ու նուիրումով, սիրով ու հաւատարմութեամբ: Յատկապէս Ձեր հոգեւոր կեանքի վերջին երկու տասնամեակները Միացեալ Նահանգներու մէջ, յաճախ եղան բազմաթիւ ու բազմազան մտահոգութիւններով լեցուն տարիներ: Մակայն, կոչումի խոր գիտակցութեամբ ու յանձնառութեամբ յաղթահարեցիք բոլոր տեսակի դժուարութիւնները եւ հոգեւոր ու ազգային վերանորոգում ու աշխուժութիւն տուիք թեմին՝ յատկապէս նոր ու երիտասարդ հոգեւոր հովիւներու պատրաստութեամբ ու ձեռնադրութեամբ:

Հոգեւորականի մը տրուած գնահատանքին չափանիշը ծառայութիւն ու հաւատարմութիւն է: Ասոնք սոսկ բառեր չեղան Ձեզի համար, այլ կեանքի որակ ու աշխատանքի ուղենիշ, որոնք ամբողջ կէս դար Աստուծոյ օրհնութեամբ ծաղկեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական անդաստանին մէջ:

Միրելի՛ Սրբազան, Ձեր ծառայական հարուստ վաստակը արդար ուրախութիւն կը պատճառէ ոչ միայն Ձեզի, այլ նաեւ՝ մեր միաբանութեան ու մեր Սուրբ Աթոռին, միաժամանակ դառնալով յուշարար մեր կրտսեր միաբան հայրերուն, եւ ընդհանրապէս մեր եկեղեցւոյ հոգեւոր մշակներուն, թէ՛ հայ հոգեւորականի ճամբան անանձնական ծառայութիւնն է ու կեանքին գերագոյն ու սրբազնագոյն նպատակը՝ դարձեալ ու միշտ ամբողջանուէր ծառայութիւնն է:

Այս ուրախ առիթով, Մեր բարձր գնահատանքը եւ ջերմ սէրը կը յայտնենք Ձեզի եւ կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեր կեանքին առջեւ բացուող նոր շրջանը լեցուի նորանոր ծառայական իրագործումներով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ: Ամէն:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Տուաւ Հայրապետական Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 25-ն Օգոստոսի, 2017 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԷ.